



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Եղեգնաձոր

22/03/2019

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱՎԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Ռոբերտ Բաղդասարյանը, Նարինե Գրիգորյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Անժելա Սարգսյանը

Լսեցին

22/03/2019թ.թիվ 3 ՀԵՐԹԱՎԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով .

Հաստատել 22/03/2019 թ. թիվ 3 հերթական նիստի օրակարգը՝

1. Եղեգնաձորի բժշկական կենտրոնի ծննդատանը մարտի 8-ից ապրիլի 7-ը ընկած ժամանակաշրջանում ծնված երեխաներին օգնություն հատկացնելու մասին :
2. Համայնքի մի խումբ բնակիչների դրամական օգնություն հատկացնելու մասին :
3. Համայնքային սեփականություն հանդիսացող 0 . 0012 հա մակերեսով հողատարածքը մեկ լոտով աճուրդով օտարելու մասին
4. Համայնքային սեփականություն հանդիսացող 0 . 014 հա մակերեսով հողատարածքը մեկ լոտով աճուրդով օտարելու մասին
5. Համայնքային սեփականություն հանդիսացող 0 . 134 հա եվ 0 . 40381 հա մակերեսներով հողատարածքները մեկ լոտով աճուրդով օտարելու մասին
6. Համայնքային սեփականություն հանդիսացող 0 . 03355 հա մակերեսով հողատարածքը մեկ լոտով աճուրդով օտարելու մասին

